

ՄԱՅ/ՄԵՌՆԵԼ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԼԵԶՎԱԿԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մահ հասկացութեան ընկալումը, նրա դիտական և զգայական իմաստավորումը, հետևաբար և լեզվական արտահայտությունը նույնական չեն տարրեր հանրությունների լեզվամտածողության մեջ: Հասկացութեան դրսևորման և արտահայտություն յուրահատկությունը տվյալ հանրության աշխարհընկալման ու կենսափիլիսոփայության արգասիքներ են՝ կապված միջավայրի, բնակլիմայական պայմանների, կրոնական-պաշտամունքային պատկերացումների, ուրիշ հանրային խմբերի հետ ունեցած շփումների ու ազդեցությունների և բազմազան այլ գործոնների հետ: Ավելին, հասարակության զարգացման տարբեր ժամանակահատվածներում որոշակի փոփոխություններ են արձանագրվում մի շարք հիմնական հասկացությունների, այդ թվում, ծնունդ, կյանք, մահ հասկացությունների ըմբռնման, արժեքներ, սրանց հետ կապված գանադան ծիսային, պաշտամունքային, լեզվամտածական և այլ համակարգերում: Օրինակ, եթե մինչև մ.թ. IV դ. հայերի մեզ հետաքրքրող հասկացութեան ընկալման հիմքում հեթանոսական աշխարհայացքն էր՝ էթնիկական յուրահատկություններով ու հարևան ժողովուրդների (հատկապես իրանական) ընդգծված ազդեցությամբ, ապա քրիստոնեության ընդունումով կատարվեց որակական խոր տեղաշարժ, աշխարհընկալման էական փոփոխություն, որն, իհարկե, աստիճանաբար, նոր ուսմունքի յուրացման ու կիրառման պորժրութացում արմատավորվեց, ցարդ պահպանելով հեթանոսության որոշ դրսևորումներ:

Հասարակության զարգացմանը զուգընթաց փոխվում են նաև մահվան պատճառների ընկալումները: V դ. մատենագիր Եզնիկը նշում է արդեն բազմաթիվ պատճառներ. «Այլ մեք զցաւոց և զմահուան բազում ինչ պատճառս ունիմք ճշմարիտ բանիւ ի մեջ բերել...»¹:

Գրաբարյան մատենագրության մեջ մահ/մեռնել հասկացությունը արտահայտվում է մի շարք բառապաշարային-քերականական միջոցներով: Այդ վկայությունները օգնում են նաև պատմության, ազգագրության, մշակույթի որոշ հարցերի պարզաբանմանը:

Եթե հնարավոր լիներ ի մի բերել հայոց լեզվի բոլոր փուլերում վկայված տվյալները, ապա որոշակիորեն կարելի կլիներ ուրվագծել մահ/մեռնել իրողության ըմբռնման և լեզվական արտահայտության փոփոխությունների ընթացքը և առանձնահատկությունը, իսկ բարբառային տվյալներն էլ կնպաստեին տարածքային-էթնիկական յուրահատկությունների դոնե

¹ Եզնիկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց (այսուհետև՝ Եզն.). Վենետիկ, 1826, էջ 71:

որոշ գծերի բացահայտմանը: Բոլոր դեպքերում գրաբարյան տվյալները հարցի պարզաբանման հիմքերն են, համեմատության գլխավոր եզրերը:

Մեզ հետաքրքրող հասկացության արտահայտության բազմազանության մեջ որպես հիմնաբառ ակնհայտորեն առանձնանում են մահ և մեռնել միավորները: Այս երկու բառերը, ծագած լինելով հ.—ե. նույն արմատից, հայերենում դրսևորում են իմաստագործառական յուրահատկություն. *mer-արմատը՝ հայ. մեռ միայն բայական գործառույթ, ունի՝ մեռանիմ: Մեռ տարբերակով անվանական-գոյականական կիրառություն չկա: Այստեղից կարելի է եզրակացնել, որ մեր նախնիները մահը ընկալել են, նախ և առաջ, որպես գործողություն: Հնարավոր է նաև, որ եղել է *mer-ով գոյականական ձև (թերևս *mor տարբերակից, որը առկա է հ.—ե. այլ լեզուներում), բայց մեզ չի ավանդվել:

Մահ բառն էլ վկայված է V դ.: Նշված դարից մահ արմատի բայական ձևի (մահել, մահանալ) վկայություն չկա²: Կիրառական այս առանձնահատկությունը հուշում է, որ մահը որպես գոյական հայերենը անմիջականորեն հնդեվրոպականից չի ժառանգել, այլ փոխառություն է իրանական լեզուներից: Այդ է հաստատում նաև մարհ ավելի հին ձևը, որի արտաքին հնչյունական կողմն իսկ խոսում է հօգուտ իրանականի: Հետագայում հայերենը մահ արմատով ստեղծել է մահանալ բայը, որն այժմ էլ գործածվում է որպես հոմանիշ մեռանիլ/մեռնել-ին: Մի խոսքով, ժամանակագրային առումով ավելի հին է մեռանիմ-ը, քան մահ-ը, իսկ վերջինս էլ նախորդում է իր բայական ձևին:

Անդրադառնանք մահ/մեռնել հասկացության ըմբռնմանն ու լեզվական արտահայտություններին:

Ա) Մարդը որպես մահկանացու կամ մահը որպես բնական երևույթ. Սա մահվան հիմնական ընկալումն է: Մյուս ընկալումները ածանցյալ են՝ կապված տարբեր գաղափարախոսությունների, մահվան ու կյանքի տարբեր հարաբերակցումների ու արժեվորումների հետ: V դ., օրինակ, հայերին ծանոթ էր նաև մահվան աստվածաշնչային ընկալումը, ինչպես նաև զրադաշտական ուսմունքը, որտեղ մահը աստվածաստեղծ չէ, այն արարել է Ջրվանի որդի Արհմնը, որը և քննադատվում է V դ. մատենագիր Եղնիկի կողմից: Մահվան աստվածաստեղծ կամ ալյաստեղծ ընկալումները, ի վերջո, չեն ժխտում մահվան որպես բնական երևույթի վաստը:

Այն, որ հայերիս մոտ նախնականն ու հիմնականն է եղել մարդ-մահկանացու ըմբռնումը, փաստարկվում է մարդ և մեռանիլ բառերի հ.—ե. նույն *mer- արմատից ծագած լինելով: Ի դեպ, հիշյալ արմատի նշված յուրահատկությունները առկայանում են նաև հ.—ե. այլ լեզուներում. հ.հնգ. māta «մարդ», -mātya «մահկանացու», ավեստ. masa «մարդ», -marəta «մահկանացու», հ. պրս. martya և այլն: Մահ իմաստով հ.—ե. *d^heu «կորչել, մեռնել» ձևը պահպանված է մի շարք լեզուներում. հմմտ. հին. սակս. doian «մեռնել», գոթ. daupus «մահացած», հ.անգլ. dead «մահացած» և

² Նոր հայկազյան բառարանը (այսուհետև ՆՀԲ) V դ. վկայություն չունի: Անվերապահորեն չփոստելով մահանալ բառի առկայությունը V դ. մատենագրության մեջ՝ կարելի է հաստատապես ասել, որ այն լայն գործածություն չունի: Ինքնուրույն գրականության մեջ, օրինակ, բառը ավանդված չէ:

այլն: Հայերենում նույնպես պահպանվել է այդ արմատը դի, դիակ բառերում³:

Մարդ-մահականացու ընկալման արտահայտությունն ենք գտնում գրաբարյան բաղաձայնի օրինակներում. «...ժամանակ մահականացու սուղ և անյայտ»⁴: «Ի լուսնոյ և վեր զամենայն ինչ որ է՝ անմահ համարել և որ ինչ նորա ի ներքոյ՝ մահականացու» (Եզն., 204): «Մեք մերով մահականացու մարմնովս կարիցեմք չարչարակից լինել անմահ մեծութեանն»⁵:

Բ) Մահը որպես երկնային կյանք. «Մտանելոց եմք յերկնից քաղաքն լուսաւոր» (Եղիշ., 154): «... ոչ լաւ համարեցաւ զանցաւորս, այլ զվերինն...»⁶: Մահվան այս ընկալումը ակունքվում է վաղ հեթանոսությունից և իր նոր զարգացումը ստանում քրիստոնեական ուսմունքում. հաճախ մեռնել (երկնային կյանք) հասկացությունները աղերսվում են Քրիստոս անվան հետ՝ լեզվական արտահայտության տարբեր միջոցներով. «Կիսօրեայ ելին յաշխարհէ՝ երթալով առ յոյսն իւրեանց Քրիստոս», «...զեղբարս սոցա՝ զտարածամ զնացեալն առ Քրիստոս», «Ընդ նմին յիշեսջիք ... և զդստրիկն իւր... որ յայս ամի փոխեցաւ ի Քրիստոս»⁷:

Վերորբերյալ օրինակները հիմնականում ուշ գրաբարյան են: Վաղ գրաբարում նման կարգի օրինակներ հաճախական չեն, և դա պետք է բացատրել այն հանգամանքով, որ V դ. դեռևս լեզվական այլևայլ արտահայտություններով Քրիստոսի մոտ այլաբերացումը լայն տարածում չունենր. եղած օրինակներն էլ հիմնականում վերաբերում են բարձրաստիճան կրոնավորներին: Ահա մի հատված Կորյունի գրքից. «...երանելոյն Սահակայ լցեալ աւուրբք երկայն ժամանակօք ... ի Քրիստոս ավանդեալ ...»: Սա Սահակի մահվան նկարագրությունն է, իսկ ներքոհիշյալը՝ Մաշտոցի «... յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ... և նովին հոգեկրոն վարուք հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումն, յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեանն, յերեք տասներորդում ամսեան Մեհեկանի»⁸:

Ուշ գրաբարում նման կարգի օրինակներում հաճախական են Աստուած կամ տէր բառերը. «... որոյ վարեալ զկաթողիկոսութիւնն ի կեանս իւր յաւելաւ առ տէր»:⁹ «Վախճանէ և յաւելու ի Տէր»⁹: «Այլ Մաշտոց այրն Աստուծոյ կացեալ ամի մի հայրապետութեան փոխի առ աստուած»¹⁰: Համեմատենք այս վերջին նախադասության իմաստի արտահայտման եղանակը V դ. մատենագիրների վկայությունների հետ. «Եւ երանելին Մեսրոպ յաշխարհէ

3 Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1984, с. 475.

4 Մովսիսի Խորենացույ Պատմութիւն (այսուհետև՝ Խոր.). Տիղիս, 1913, էջ 28:

5 Եղիշի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (այսուհետև՝ Եղիշ.). Երևան, 1957, 148:

6 Փաւստոսի Բիւզանդացույ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Բուզ.). Ս. Պետերբուրգ, 1883, 10:

7 Վերոհիշյալ օրինակները քաղել ենք Դ. Գյուրջինյանի «Քրիստոս անունը Հայերեն կայուն բառակապակցություններում» արժեքավոր հոդվածից («Էջմիածին», 1993, Դ-Ձ, էջ 80-87):

8 Օրինակները տե՛ս Կ ո Ր Յ ու ն. Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխատասիրություն՝ Արտաշես Մաթևոսյանի, Երևան, 1994, էջ 103-105:

9 Առաքել վարդապետ Դաւրիժեցույ Պատմութիւն. Վաղարշապատ, 1896:

10 Օրինակը քաղված է Ասողիկի Պատմութիւնից (տե՛ս Հայկական համարաբառ. 18, գիրք 2-րդ, էջ 548):

փոխեցաւ (Խոր., 356): «Վախճանեցաւ երանելին Մաշտոց ի Վաղարշապատ քաղաքի»¹¹:

Երկնային կյանքը, երկրայինի վախճանը ենթադրում է նաև հավիտենության խորհրդանիշը. «Զյաւիտենիցս գտցէ զկեանս», «Կորուսին զանձինս, այսինքն զկեանս աշխարհի, զի զյաւիտենիցն գտցեն զկեանս»¹²: Երկնային կյանք հասկացությունը արտահայտվում է նաև վերին աշխարհ, հանդերձյալ աշխարհ, երբեմն նաև այն աշխարհ կապակցություններով: «Յամեալ մոռանայցէ գերկիւղ հանդերձելոյ աշխարհին» (Փարպ., 118):

Գ) Մահը որպես կյանքի հակադրություն. Այս ըմբռնման լեզվական արտահայտությունը սովորաբար դրսևորվում է կեանք (կենցաղ) գոյակաւնի և որոշ բայերի հարադրութեամբ՝ մեռնել, կյանքից հեռանալ նշանակութեամբ: «Քանզի հիւանդացեալ Վաղենտինոս... վճարի ի կենցաղոյս» (Խոր., 291): «Մորթագերծ մահուամբ պակասեցաւ ի կենաց» (Եզն., 117): «Բարձցէ զնոսա ի կենացս» (Փարպ., 88): «Եթէ որպէս Պապայ դեղ մահու արբուցեալ սրբոյն ելոյժ ի կենցաղոյս» (Խոր., 305): Օրինակների այս շարքը ավարտենք Դավիթ Հարքացու մի հարց ու պատասխանով.

–հարց – Զինչ՞ է մահ

–պատասխան – Ի կենաց լուծումն¹³:

Դ) Մահը որպես հոգու՝ մարմնից անջատում. Երկրային կյանքի հոգու ու մարմնի միասնությունը հակադրվում է երկնային կյանքի՝ հոգու մարմնից անջատմանը: Հին հայերենում հոմանիշներ են հոգի, ոգի, շունչ բառերը: Շունչը հաճախական էր և թերևս բարբառային կիրառություն ունենէր: Եզնիկն, օրինակ, շունչ կիրառում է հոգի իմաստով: «Ոչ տեւէր մարմինն ընդ շնչոյն յերկար ժամանակս կեալ» (Եզն., 72): «Որք զշունչն անարար անմահ և աստուածեղէն Յաստուծոյ բնութենէ անտի ասեն» (Եզն., 209–210): «Զմարմին իբրեւ զայլսն կորստական համարին և զշունչսն փոփոխելի ի մարմնոց ի մարմինս» (Եզն., 228): Այդ բառին հանդիպում ենք նաև ոսկեդարյան թարգմանություններում. «Շունչ ոչ մեռանի և ոչ բեւեռս ընդունի ... եւ եթէ մարդ ի յորոշել շնչոյն մեռանի, ոչ ի կորուստ, այլ ի դադարս մեկնի շունչն»¹⁴:

Հոգի + բայ մի շարք հարադրություններ գրարարում ունեն «մահանալ» իմաստը: Ուշագրավ օրինակ է Քրիստոսի մահվան նկարագրությունները ըստ չորս ավետարանների: «Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ և արձակեաց զոգին» (Մտթ. Իէ, 50): «Եւ Յիսուս արձակեաց ձայն մեծ և եհան զոգի» (Մարկ. ԺԵ, 37): «Եւ կարդաց Յիսուս ի ձայն մեծ և ասէ. Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. զայս իբրեւ ասաց. եհան զոգի» (Ղուկ. ԻԳ, 46): «Իբրեւ առ Յիսուս զքացախն հանդերձ լեզուովն ասէ. Ամենայն ինչ կատարեալ է. և խոնարհեցուցեալ զգլուխն աւանդեաց զոգին» (Յովհ. ԺԹ, 30): Բերենք այլ օրինակներ. «...վճարեալ հոգին սատակէր անխոստովան» (Փարպ., 152): «Անմիտ յայսմ գիշերի յոգիդ քո պահանջեն

11 Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Փարպ.). Տիղիս, 1904, 38:

12 Թովմայ Արծրունեոյ Պատմութիւն. Երևան, 1985, էջ 292:

13 Գ ա լ ու ս տ Տ ե Ր - Մ կ Ր տ չ յ ա ն. Հայագիտական ուսումնասիրություններ. հ. 2-րդ, Երևան, 1998, էջ 239:

14 Եւսեբիայ Եպիսկոպոսի Եմեսացոյ ճառք («Հանգէս ամսօրեայ», 1956, էջ 410–411):

հրեշտակք» (Վկայք., 194-195): Խորենացին օգտագործել է փչել հոգին կապակցությունը (36):

Ե) Մահը որպես կորուստ. Լեզվական արտահայտությունը իրականանում է կորուստ, կորնչիմ բառերով: ՆՀԲ-ն կորուստ մեկնում է «կորնչիլն, կորուսանելն, սատակումն, մահ, եղծումն...»: Այսինքն՝ մահ նշանակությունը կորուստ բառի հիմնական իմաստներից մեկն է դիտվում:

Պետք է արձանագրել, սակայն, որ այդ իմաստը երևակվում է համատեքստում, նախորդ կամ հաջորդ մտքի կապով, հաճախ էլ մահ բառի առկայությամբ: «Աստուած ... ոչ խնդայ ընդ կորուստ մարդկան» (Եզն., 75): «Երազագէտ է այնպիսին ի կեանս իւրում և յանգիւտ կորուստն յուղարկի ի մահուան իւրում» (Եղիշ., 14): «Գոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարապարտ կորուստն» (Բուղ., 101):

Զ) Մահը որպես հանգիստ. Լեզվական արտահայտությունն իրականանում է հանգչիմ, հանգիստ բառերով: Հանգչել ըստ ՆՀԲ-ի ունի «մահանալ, վախճանվել» իմաստները: Գրաբարում նման կարգի բազմաթիվ օրինակներ կան, որը հուշում է, որ մահվան այլաբանական այդ ընկալումը տարածված է եղել հին հայոց մեջ. այդ է հաստատում և գերեզման բառի հանգստոց, հանգստարան հոմանիշների հաճախականությունը:

Հանգիստ, հանգչել բառերով մահ իմաստի մեջ առկա է վերաբերմունքային շեշտադրում՝ նկատի է առնվում միայն դրական անձնավորությունը, ինչպես սատակեմ-ի համար՝ բացասական անձնավորությունը: Բերենք մի քանի բնագրային օրինակներ. «Եւ փոխանակ սակաւ աշխատութեանս մերոյ՝ բաղմապատիկ հանգիստ ընդունելոց եմք» (Եղիշ., 154): «Մինչեւ ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի և իւրոյ հանգստեանն» (Բուղ., 5): «... և կատարեալ զընթացս նահատակութեան իւրոյ հանգչէր» (Փարպ., 5): «Եւ յետ հանգստեան սրբոյն Ներսեսի գնաց չոգաւ ի գաւառն Կորդուաց» (Բուղ., 185):

Այլաբերացման (տարուացման) նույն ընկալումով մահանալ իմաստով գործառում է և ննջել-ը: Որ այս իմաստով ննջել-ի գործածությունը բավական հին ու հաճախական է, վկայում է և այդ բայի անցյալ դերբայի ննջեցեալ «մահացած» իմաստով կիրառությունը (սակավ դեպքերում է միայն արտահայտում «քնած» իմաստը): Բերենք մի քանի օրինակ ննջել բառով. «Կին կապեալ է, ցորքան ժամանակս կենգանի է այր նորա, ապա եթէ ննջիցէ այր նորա, աղատ է, ում կամիցի ամուսնանալ, բայց միայն Տերամբ» (Ա.Կորնթ. է, 39): «Իսկ արդ որ ննջեցինն ի Քրիստոս կորեա՞ն արգեւք» (նույն տեղում, 18): «Որում դիւրին միւսանգամ նորոգել զմեզ ի հողոյն և զամենայն զյառաջագոյն զննջեցեալն» (Եղիշ., 68):

Ստուգապես դժվար է փաստարկել, թե նախաքրիստոնեական շրջանում հայերը ննջելը «մահանալ» իմաստով օգտագործել են, թե ոչ, հաստատ է մի բան, որ այդ ընկալումը ավելի է արմատավորվել Աստվածաշնչի շնորհիվ, որտեղ մի շարք վկայություններ կան ննջել «մահանալ» նշանակությամբ. «Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի զարթուցից նմա» (Յովհ. ԺԱ, 11): «Երանի մեռելոց, որք ի տէր ննջեցին» (Յայտ. ԺԴ, 13): «Որ ննջեն ի գերեզմանի» (Սաղմ., 256): (Տե՛ս նաև Սաղմ. ԺԲ, 4, Յովբ. Է., 11, ԻԱ, 26, 100):

է) Մահը որպես ավարտ, վերջ. Այս ընկալման դեպքում նկատի է առնվում կյանքի՝ որպես գոյություն մի ձևի՝ երկրայինի ավարտը: Գրաբարում վերջ բառին հոմանիշ մի շարք միավորներ արտահայտում են մահ, բայական ձևով՝ մահանալ հասկացությունը:

Վախճան – և՛ ՆՀԲ-ն և՛ Արմատական բառարանը առաջին հերթին նշում են «վերջ», ապա «մեռնել» իմաստը: Բառը Արմատական բառարանում ստուգաբանված չէ. թերևս այն իրանական փոխառություն է, նախնական «վերջ, ավարտ» նշանակությունը¹⁵: Վախճան «մահ» – վախճանիմ «մահանալ» իմաստը ամենայն հավանականությունը ձեռք է բերվել հայերենի հողի վրա: Ահա մի քանի վկայություններ նշված բառով: «Հասանել վախճան Արտաշիսի» (Խոր., 190): «Եւ մինչ դեռ պատասխանի այս թղթոց ոչ էր ընկալեալ վախճանի Աբդարիոս (Խոր., 156):

Ջրաւ – ըստ ՆՀԲ-ի «եզր, կատարած, յանգ, սպառուած... վնաս, մահ»: V դ. մատենագրության մեջ այս բառը հաճախական չէ: Եղած հատուկնստ օրինակներում էլ զրաւ ունի «վերջ» իմաստը: Հմմտ. «Ապրեցուցանէ զորդիսն արքային, յաղթութիւն և զրաւ պատերազմին արարեալ» (Խոր., 184): Մահ իմաստով վկայությունները ուշ շրջանից են: «Հրամայեաց դահճացն տալ ի վերայ նոցա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ» (Արծր., 266): «Նոյն ժամ հրաման հասեալ զրաւ առնել կենացն նորա» (Արծր., 328):

Վճարել – բազմաթիվ իմաստներից զատ ունի նաև «մեռնել» իմաստը: «... որպէս Եւսեբիոս վճարէր ի բանդին» (Բուզ., 81): «Իսկ նա մեծաւ խնդութեամբ կարկառեալ զպարանոցն, վճարէր ի սուսերէն» (Բուզ., 149): Ավելի հաճախական է կեանք (կենցաղ) բառերի հետ գործածությունը: «Քանզի հիւանդացեալ Վաղենտինու... վճարի ի կենցաղոյս» (Խոր., 291): «...թէ քանիք և ոյք ի նոցանէ որք աստուածայաշտութեամբ վճարեցին զկեանս ...» (Խոր., 68):

Կատարել – իմաստային բազմազանություն մեջ ունի և «վերջացնել, մահանալ» նշանակությունը: «Եհաս ժամ կատարման մերոյ» (Եղիշ., 177): «Եւ կատարեցան սոքա վեցեքեան սուրբ և ցանկալի մահուամբն իւրեանց» (Եղիշ., 182): «Եւ այս անուանք են քաջ նահատակացն, որ ... կատարեցան» (Եղիշ., 119): Բառի հիշյալ կիրառությունների դեպքում գարձյալ նկատելի է վերաբերմունքային (դրական) մոտեցումը:

Վեջանալ – ՆՀԲ-ն «մահանալ» իմաստով վկայում է միայն մեկ օրինակ. «Թագաւորեցելոյ քաղաքին առաջնորդ յաղագս ծերութեան վերջանայր»: Վերոգրյալ օրինակը VII դ. թարգմանություն է. ըստ երևույթին, թարգմանչի նորամուծություն կամ հունարենից անհաջող թարգմանություն: V դ. մատենագրությունից վերջանալ «մեռնել» իմաստը մեղ չի հանդիպել: Վերջանալ-ին հոմանիշ աւարտել բառով նույնպես «մահանալ» նշանակությունը կիրառություն չկա: Ավելացնենք նաև, որ վերոգրյալ բառերից միայն վախճանալ-ի հիմքն է, որ գոյականաբար դործավում է «մահ» իմաստով: ՆՀԲ-ն թեպետ զրաւ բառահոգվածում նշում է և «մահ»

15 Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հայերենի իրանական փոխառությունները. Երևան, 1990, էջ 260:

իմաստը, սակայն վկայած օրինակում իսկ զրաւ-ը հանգես է գալիս բայական հարադրութեան կազմում:

Երբեմն «կյանքի վերջ, վախճան» իմաստն արտահայտվում է ժամանակ ուսուցիչ: ՆՀԲ-ն ժամանակ գլխաբառի բազմաթիվ իմաստների շարքում նշում է նաև «օրհաս, կատարած կենաց» հղելով Սուրբ Գրքի հետևյալ օրինակները. «Եթե հասեալ իցէ ժամանակ մեր, մեռցուք քաջութեամբ», «մերձեցուցեր զաւուրս քո և ածէր զժամանակ ամաց քոց»: Ինչպես նկատելի է, այս կիրառությունը հայերենում հաճախական չէ, և իմաստն էլ հասկացվում է համատեքստից, իսկ այդ կիրառության ակունքն ու պատճառը թերևս կարելի է տեսնել Եվսեբիոս Եմեսացու մի հաղորդման մեջ: Եվսեբիոսը մեկնելով Մենդոց գրքի «ժամանակ ամենայն մարդոյ եկեալ հասեալ է առաջի իմ» (Ձ., 13) հատվածը՝ բացատրում է. «Իսկ հերբայեցին և ասորին զժամանակն վախճան ասեն կամ կատարած»¹⁶: Այսինքն՝ առկա է աստվածաշնչյան ասորարանությունների գործոնը¹⁷:

Ը) Մահը որպես գաղափարախոսություն. Այս դասակարգումը և անվանումը խիստ պայմանական է. հաշվի ենք առել այն դեպքերը, երբ մահը աղբյուրվում է որևէ գաղափարի, սկզբունքի հետ (հայրենասիրության, քրիստոնեական վարդապետության... և այլն): Լավագույն օրինակը Եղիշեի, արդեն թևավոր խոսք դարձած, «մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» նախադասությունն է:

Հայ մատենագրության մեջ քրիստոնեական ուսմունքի ջատագովների կյանքի վախճանը հաճախ արտահայտվում է մարտիրոսանալ, վկայել, նահատակել բառերով: «Պետրոս և Պողոս առաքելաքն ի Հռոմ վկայեցին», «ուր վկայեաց սուրբն Գայիանէ», «Անտիոքացւոց եպիսկոպոս մարտիրոսացաւ», «բազում հայրապետք մարտիրոսացան», «նահատակեցաւ ի յերկրի և յերկինս պսակեցան»: (Օրինակները քաղված են ՆՀԲ-ից)¹⁸: Ահա Եղիշեի մեկ այլ նկատումը. «Մարդք, որ ոչ ի կապանաց զանգիտեն, և ոչ ի տանջանաց երկնչին... ղմահ քան զկեանս ընտրեն, ո՞վ է որ կարէ նոցա դիմակաց լինել (59):

Անկախ այլևայլ ընկալումներից, հայերը, անշուշտ, նաև մահվան ճակատագրապաշտական կյանքի տեղությունը վերուստ սահմանված լինելու գաղափարին էլ են ծանոթ եղել: V դ. Եգնիկը առարկում է ճակատագրապաշտությունը և քննադատում քավդեաններին, որոնք «...զծննդոց պատճառս և զմահուանց՝ յաստեղաց իբրեւ ի կենդանեաց դնեն: Որպէս թէ յորժամ ծնանիցին, անդէն և մահուանքն իւրաքանչիւր ուրուք անվրէպ սահմանիցին. և ըստ այն ոչ յառաջել ումեք մեռնել հնար իցէ և ոչ յամենալ (Եգն., 154):

Եգնիկի այս քննադատությունը հուշում է, որ մահվան այդօրինակ ըմբռնումը հնում և իր ապրած ժամանակաշրջանում կար, իսկ իր ժխտո-

16 Եվսեբիոս Եմեսացույ Մեկնութիւնք. Վենետիկ, 1980, էջ 44:

17 Աստվածաշնչի այս հատվածի ժամանակ բառը, մի շարք այլ լեզուներում վերջ, վախճան է. ռուս. «конец всякой плоти пришел пред лицо Мое» (տե՛ս Библия, книги священного писания Ветхого и Нового завета, Российское библейское общество, М., 1994):

18 Մարտիրոսանալ և վկայեմ բառահոգվածները:

զական վերաբերմունքը անպայման խարսխված է քրիստոնեական գաղափարախոսության վրա:

Ինչքան էլ մահվան՝ որպես բնական երևույթի ընկալումը արմատավորված լիներ մարդկանց գիտակցության մեջ, այդուհանդերձ մահը որպես կորուստ, բաժանում, երկրայինի ավարտ և վերջապես միստիկա, խորհրդավոր ու անմեկնելի երևույթ, ապրողների մեջ առաջացնում է վախի, բացասական վերաբերմունքի զգացում: Գրաբար մատենագրության մեջ բազմաթիվ օրինակներ կան, երբ մահ, մեռնել բառերը ուղեկցվում են այդ բացասական վերաբերմունքն արտահայտող բառերով: Ահա օրինակներ Մ. դ. մատենագրությունից: Եղիշեից՝ զդառնութիւն մահու (76, 86, 104, 173), Բուզանդից՝ չարութեամբ, դառնութեամբ մահուան (77), դառն մահ (102), Եզնիկից՝ մահ տարածամ (79, 20): Կորյունից՝ ամենակուլ մահ (24)¹⁹, Փարպեցուց՝ դառն մահ, անպիտան մահ, չար մահ (35, 83, 90): Հաճախ ենք հանդիպում մահ, մեռնել բառերի կողք կողքի գործածությանը. «Յասել ինձ ցմեղաւորն, թէ մահու մեռանիցիս» (Եզնիկ. ԼԳ, 8): «Մատենացաւ ի ձեռս խաչահանուացն, մահու մեռաւ և եգաւ ի գերեզմանի» (Եղիշ., 148): «Ապա և ինքն Մանուէլ մահու մեռանէր» (Բուզ., 154): «Ասէ Ադամ, գիտասջիր զի մեռանիցիս» (Եզն., 245): Գրաբարի քերականություններում մահու մեռանիլ կապակցությունը դիտվում է որպես ոճական հնարանք: Սակայն կարելի է արձանագրել մեկ այլ փաստ ևս. վկայված օրինակների մեծ մասը թույլ է տալիս ենթադրելու, որ նման կասկածություններն արտահայտում են ոչ բնական մահ հասկացությունը: Կարելի է ենթադրել, որ ոճական երանգ ունենալուց առաջ, նախապես մահու մեռանիլ կասկածությունը ունեցել է նշված իմաստը: Այս ենթադրության օգտին է խոսում այն, որ հնդեվրոպացիները բնական մահ հասկացությունը տարբերակում էին, և կարելի է վերականգնել suo-moti^(h) mot-/mor կասկածությունը sue («իր ցեղի, իր նախնիների մահով»)՝²⁰:

* * *

Մահ/մեռնել հասկացության փառաբարարյան արտահայտամիջոցների հետդրաբարյան փոփոխ լեզվավիճակների հետ թուույիկ համեմատությունն իսկ թույլ է տալիս եզրակացնելու, որ վերջիններում այդ միջոցները ավելի բազմազան ու տարաբնույթ են: Արդի ժողովրդախոսակցական լեզվում մեզ հետաքրքրող հարցին վերաբերող շատ ոճեր, դարձվածային միավորներ գրաբարը չի ավանդել. հմմտ. «Այն աշխարհը գնալ, այն աշխարհը գլորել, (ճամփել, ուղարկել), աշխարհի հետ հաշիվները մաքրել, աչքը աշխարհի վրա փակել, աստղը ծովն ընկնել, աստղի լույսը խավարել, արևը հանգչել, արևը մայր մտնել, արևը խավարել, արևը (անեծք), կյանքի թելը կտրվել, ոտքերը տնկել (մեկնել)....:

Հասկացության արտահայտման գրաբարյան ձևերի սակավությունը կարելի է բացատրել մի շարք հանդամանքներով.

1. Բնականաբար ժամանակի ընթացքում փոփոխվում է իրականության ընկալումն ու համապատասխան լեզվական արտահայտությունը:

19 Կ ո Ր Ի Լ Ն. Վարք Մաշտոցի. Երևան, 1941:

20 Т. Г а м к р е л и д з е, В я ч. И в а н о в. նշվ. աշխ., էջ 830:

2. Հետգրաբարյան փոփոխում գործառնող որոշ արտահայտություններ, անշուշտ, եղել են և հնում, սակայն գրաբարը դրանք չի վկայել, որովհետև ա) գրաբարյան հեղինակները ձգտելով պահել գրական լեզվի չափանիշները հաճախ խուսափում են ժողովրդական բառ ու բանից, խոսակցական-բարբառային տարրերից, բ) գրաբար մատենագրության ժանրային ու բովանդակային առանձնահատկությունները սահմանափակ հնարավորություն են ընձեռում մեզ հետաքրքրող հասկացության զանազան փոխաբերացված արտահայտությունների արձանագրման համար:

3. Գրաբարի (հատկապես վաղ շրջանի) մատենագիրները, լինելով քրիստոնեական ուսմունքի գիտակներ ու քարոզիչներ, մխտական վերաբերմունք ունենալով հեթանոսության ու հեթանոսական մշակույթի հանդեպ, խուսափել են քրիստոնեական ուսմունքին անհարիր ընկալումներից ու դրանց լեզվական արտահայտության շատ իրողությունների արձանագրումից:

ВОСПРИЯТИЕ И ЯЗЫКОВЫЕ ВЫРАЖЕНИЯ ПОНЯТИЯ “СМЕРТЬ/УМИРАТЬ” В ГРАБАРЕ

ЛАВРЕНТИЙ ОГАНЕСЯН

Р е з ю м е

На основе свидетельств грабара различаются следующие восприятия понятия “умирать/смерть” с соответствующим языковым выражением: а) человек как смертный или смерть как естественное явление, б) смерть как небесная жизнь, в) смерть как противопоставление жизни, г) смерть как отделение души от тела, д) смерть как потеря, е) смерть как покой, ж) смерть как завершение, конец, з) смерть как идеология. Грабаровские формы выражения рассматриваемого понятия малочисленнее, чем в постграбаровский период, так как жанровые особенности грабаровских памятников ограничивают различные переносные выражения понятия “смерть”, авторы раннеграбаровского периода, будучи знатоками и пропагандистами христианского учения, избегали чуждого христианству восприятия и фиксации некоторых реалий его языкового выражения. Разумеется, с течением времени под влиянием различных факторов изменяется восприятие и языковое отражение того или иного явления. Достоин внимания тот факт, что и.-е. корень *meǵ в грабаре засвидетельствован только в глагольной форме *մեռանիմ*, а существительное *մահ* является иранским заимствованием, глагольные формы которого (**մահեմ*, *մահանալ*) в раннем грабаре не засвидетельствованы.